ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/46, 26.06.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Սավ Գրուպ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բժշկական պարագաների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել պատվիրատուին հնարավորություն տալ «Սավ Գրուպ» ՍՊԸ-ին շտկելու փաստաթղթերը

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

<<ՍԱՎ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ ՀՀ Կոտայքի մարզ գ.Առինջ

Տնօրեն՝ Ս. Վարդումյան

sav.group@mail.ru հեռ. 098 77 08 08

ԴԻՄՈՒՄ - ԲՈՂՈՔ

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ մեր կազմակերպությունը՝ <<ՍԱՎ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ն մասնակցել է <<ՆՈՐՔ>> ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ /ք. Երևան, Արմենակյան 153 / կողմից հայտարարված Բժշկական պարագաների ՆԻԿՀ-ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով մրցույթին և ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Բանավոր կերպով տեղեկացել եմ այն մասին, որ ներկայացված գնային առաջարկի 1 , 2 ,8 չափաբաժինները մեր կազմակերպության կողմից ներկայացված է, մինիմալ գներով, որը մերժվել է, պատճառաբանվել է, որ փաստաթղթերը ստորագրված է եղել այլ անձի կողմից, և շտկման հնարավորություն չի տրվել, այսինքն խախտվել է Գնումների գործընթացի 48-րդ կետը :

Հարկ եմ համարում նշել նաև, որ մեր կազմակերպության կողմից ներկայացված փաստաթղթերը ստորագրված է եղել լիազորված անձի կողմից (լիազորագիր թիվ 033, 28.03.2019ուժի մեջ է 31.12.2019):

Բայց հիմնվելով Պետության և ինչպես նաև մեր կազմակերպության շահերից , խնդրում եմ Գնումների մասին ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի պարտավորեցնել պատվիրատուին հնարավորություն տալ շտկել փաստաթղթերը: Ի դեպ հնարավորություն է տրվել մասնակից այլ կազմակերպություններին, որը երևում է կից փաստաթղթերում:

Կից ներկայացվում է՝

1. Լիազորագիր 021 և 033
2. Վճարման կարգեր
3. Գնային առաջարկ
4. Դիմում -Հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու
5. Արձանագրություն N 2
6. Արձանագրություն N 3

ՍԱՎ ԳՐՈՒՊ ՍՊԸ

Տնօրեն Ս. Վարդումյան

20.06.2019

ՍՏԱՑՎԱԾ է

N 15-28773-19

26.06.19